Քաղաքացիական գործ թիվ ԵԴ2/17636/02/23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին

07 օգոստոսի 2023թ. քաղաք Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Գ. Վարդանյանս, քննության առնելով «ՄՄՎ ՇԻՆԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությունն ընդդեմ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի՝ «ՄՄՎ ՇԻՆԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությանը գնումների ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում ներառելու մասին 2023թ. մայիսի 5-ի որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

«ՄՄՎ ՇԻՆԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությունը 2023թ. հուլիսի 21-ին հայցադիմում է ներկայացրել ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ընդդեմ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի՝ «ՄՄՎ ՇԻՆԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությանը գնումների ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում ներառելու մասին 2023թ. մայիսի 5-ի որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Դատարանի (դատավոր Մ. Ստեփանյան) 2023թ. հուլիսի 28-ի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է:

Հայցադիմումի թերությունները վերացվել են և որոշումը ստանալուց հետո եռօրյա ժամկետում կրկին ներկայացվել է դատարան:

Հայցադիմումը ներկայացված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121 և 122 հոդվածների պահանջներին համապատասխան և նույն օրենսգրքի 126 և 127 հոդվածներով սահմանված հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր չկան:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 127 հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ եռօրյա ժամկետում հայցադիմումի թերությունները վերացվելու և այն դատարան կրկին ներկայացվելու դեպքում հայցադիմումը համարվում է առաջին ատյանի դատարան ներկայացված այն սկզբնապես ներկայացնելու օրը:

Հետևաբար, հայցադիմումը դատարանում պետք է ընդունված համարել 2023թ. հուլիսի 21-ին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124, 125, 127, 199-200, 234.5 և 234.6 հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«ՄՄՎ ՇԻՆԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությունն ընդդեմ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի՝ «ՄՄՎ ՇԻՆԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությանը գնումների ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում ներառելու մասին 2023թ. մայիսի 5-ի որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցադիմումն ընդունել վարույթ:

Հայցադիմումը համարել դատարան ներկայացված այն սկզբնապես ներկայացնելու օրը՝ 2023թ. հուլիսի 21-ին:

Թիվ ԵԴ2/17636/02/23 քաղաքացիական գործով կայացվող եզրափակիչ դատական ակտը հրապարակել 2023թ. սեպտեմբերի 15-ին դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով:

Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ՝ Գ. ՎԱՐԴԱՆՅԱՆ